



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 նոյեմբեր, 2019 թվականի № 53-Լ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՉԱԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ
ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 67-րդ ու 84-րդ հոդվածների և «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ «Ընկերություն») կանոնադրության պահանջները՝ Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդը **ո ր ո շ ու մ է.**

1. Հաստատել և 2020 թվականի հունվարի 1-ից մինչև 2020 թվականի փետրվարի 1-ը գործողության մեջ դնել Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքը՝ համաձայն սույն որոշման № 1 հավելվածի:
2. Հաստատել և 2020 թվականի հունվարի 1-ից մինչև 2020 թվականի փետրվարի 1-ը գործողության մեջ դնել Ընկերության հաստիքացուցակը՝ համաձայն սույն որոշման № 2 հավելվածի:
3. Հաստատել և 2020 թվականի փետրվարի 1-ից գործողության մեջ դնել Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքը՝ համաձայն սույն որոշման № 3 հավելվածի:
4. Հաստատել և 2020 թվականի փետրվարի 1-ից գործողության մեջ դնել Ընկերության հաստիքացուցակը՝ համաձայն սույն որոշման № 4 հավելվածի:
5. 2020 թվականի հունվարի 1-ից ուժը կորցրած ճանաչել Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի 2019 թվականի օգոստոսի 20-ի № 43-Լ որոշման 1-ին և 2-րդ հավելվածները:
6. Սույն որոշման պահանջների կատարումը հանձնարարել Ընկերության գործադիր տնօրենին:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՇԻՐԻՆՅԱՆ

27 նոյեմբեր, 2019 թվականի
ք. Երևան